ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

ԹԻՎ ՍՑ-ԷՍ-2019/08

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.01.2019թ. թիվ 26-3/372-19 գրությամբ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00890518/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 08.01.2019թ. թիվ ԴՎԱ/5 գրության հիման վրա, 15.01.2019թ. նախաձեռնել է «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 08.01.2019թ. թիվ ԴՎԱ/5 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգում 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն /e-auction.am/ համակարգի միջոցով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն իր որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացրել է օրենսդրությամբ սահմանված ժամկետում, սակայն դրանց մեջ առկա են եղել անհամապատասխանություններ: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և սահմանված կարգով /e-auction.am/ համակարգի միջոցով ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները: Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ որոշեց 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժել»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից 21.01.2019թ. ժամը 15:20-ին, 29.01.2019թ. ժամը 15:10-ին, 08.02.2019թ. ժամը 16:00-ին, 13.02.2019թ. ժամը 16:10-ին, ինչպես նաև 18.02.2019թ. ժամը 16:10-ին

հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր լիազորված ներկայացուցչի մասնակցությունը նշված նիստերին:

3. «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն 25.01.2019թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն ընթացակարգի արդյունքում հաղթող է ճանաչվել N 4 և N 6 չափաբաժինների մասով (մեր կողմից ներկայացված գներն են համապատասխանաբար՝ 214,500 ՀՀ դրամ և 122,000 ՀՀ դրամ):

Սահմանված կարգով համակարգի միջոցով ներկայացրել ենք որակավորման չափանիշներին մեր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը (նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի նկարագիրը):

Արդյունքները գնահատելիս գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը և 21.12.2018թ. ժամը 16:12 էլեկտրոնային ծանուցման միջոցով մեզ ուղարկել է շտկման պահանջ՝

N 4 չափաբաժնի մասով (ապրանքատեսակի անվանումը՝ սեղմակ պլաստմասե) բացակայել է ապրանքատեսակի էսքիզը (որը ներկայացնելու պահանջ սահմանված չէր հրավերով),

N 6 չափաբաժնի մասով (ապրանքատեսակի անվանումը՝ մկրատ դերձակի) բացակայել է ապրանքի պիտակավորման մասին տեղեկատվությունը (մեր կողմից ներկայացված է եղել ապրանքի ամբողջական նկարագիրը և տեխնիկական բնութագիրը՝ առանց պիտակավորման մասին տեղեկության):

Ընկերությունը ստացել էր շտկման պահանջի ծանուցումը 21.12.2018թ. ժամը 16:12-ին (օրը ուրբաթ): Շտկման համար սահմանված էր մեկ աշխատանքային օր: Երկուշաբթի օրը՝ 24 դեկտեմբերի 2018թ. ժամը 16:30-ից մենք փորձեցինք ուղարկել պահանջվող շտկումը, սակայն էլեկտրոնային աճուրդի համակարգը թույլ չէր տալիս ներբեռնել անհրաժեշտ տեղեկատվությունը և արդյունքում այդպես էլ չհաջողվեց այն իրագործել մինչև աշխատանքային օրվա ավարտը և նույնիսկ հաջորդ օրը:

Հրավերում առկա չէ (էլեկրոնային աճուրդի և ոչ մի հրավերում չի նշվում) պատվիրատուի էլեկտրոնային փոստը, որին հնարավոր լինի նման դեպքերում ուղարկել պահանջվող տեղեկատվությունը, և նշված չէ որևէ հեռախոսահամար՝ դիմելու և առաջացած խնդիրները լուծելու համար:

Արդյունքում մենք զրկվեցինք պայմանագիր կնքելու հնարավորությունից՝ որի մասին հետագայում ստացանք էլեկտրոնային ծանուցում:

Էլեկտրոնային աճուրդների անցկացման կանոնակարգերում մենք չգտանք որևէ հղում, թե առաջարկվող ապրանքի ներկայացված տեխնիկական բնութագրում տեղ գտած թերությունների շտկման համար տրամադրվող մեկ աշխատանքային օր ժամկետը երբ է ավարտվում: Գործարար միջավայրում հարցումներից պարզեցինք մեզ համար, որ ծրագրի մեթեմատիկական ալգորիթմը կառուցված է այնպես, որ ծանուցման պահից հաշվվում է 24 ժամ, որն, ըստ մեզ, կարող է ավարտվել նույնիսկ հաջորդ աշխատանքային օրվա սկզբին՝ հնարավորություն չընձեռնելով մասնակցին ներբեռնելու պահանջվող տեղեկատվությունը, որը և տեղի է ունեցել մեր դեպքում:

Ավելորդ չեմ համարում նաև նշել որ, ըստ մեզ՝ տեխնիկական բնութագրում ի հայտ եկած անհամապատասխանությունները էական չէին և չէին առաջացնում ապրանքի մատակարարման համար երկակի իմաստ:

Այժմ էլ մենք շահագրգռված ենք վերը նշված ընթացակարգի նշված չափաբաժինների մասով հաղթող ճանաչվելու, պայմանագիր կնքելու և ապրանք մատակարարելու հարցում»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կոմերցիոն տնօրեն Ներսիկ Մանուկյանը:

4. <u>էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող «Ավռոմիկ» ՍՊԸ-ի ներկայացրած դիրքորոշումը</u>

Ղեկավարվելով «Գմումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի

15-րդ կետով՝ Բողոքներ քննող անձը 06.02.2019թ.և 11.02.2019թ. հհամապատասխան գրություններով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալին՝ խնդրելով վերջինիս հանձնարարականը ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան ստորաբաժանմանը՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի քննության նիստին էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող անձի մասնակցությունն ապահովելու համար:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/24» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ՝ էլեկտրոնային աճուրդի Eauction համակարգը (այսուհետ՝ համակարգ) սպասարկող կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/24» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ պատվիրատու) որակավորման շտկման պահանջի ծանուցումները համակարգի միջոցով ուղարկվել են 21.12.2018թ. ժամը 15:59:44-ին հետևյալ բովանդակությամբ՝ «Հարգելի Տիգրան Մանուկյան, Դուք դիմել եք «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին: Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին Ձեր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, որոնցում նկատվել են հետևյալ թերությունները. Հայտնում ենք, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/24» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3 կետով նախատեսված և Ձեր կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

-4-րդ չափաբաժնի մասով Ձեր կողմից ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագրում բացակայում է տեխնիկական բնութագրի անբաժանելի մաս կազմող էսքիզը: Անհրաժեշտ է ներկայացնել այն:

-6-րդ չափաբաժնի մասով Ձեր կողմից ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագրում նշված չէ պիտակավորման մասին տեղեկությունը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը: Անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Առաջարկում ենք գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունները»:

21.12.2018թ. ժամը 16:00:08-ին երկրորդ անգամ ուղարկվել է նույնաբովանդակ ծանուցում»:

Կազմակերպությունը Բողոքներ քննող անձին ներկայացրել է նաև ՀՀ ֆինանսների նախարարության և հիշյալ համակարգը սպասարկող կազմակերպության միջև էլեկտրոնային նամակագրության «Trello» համակարգի միջոցով կատարված գրառումների արտատպված պատկերները և տեղեկատվություն՝ մասնակցի կողմից 24.12.2018թ. համակարգում կատարված գործողությունների վերաբերյալ, որի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ 24.12.2018թ. «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն մուտք է գործել նշված Աճուրդի մանրամասների էջ /https://eauction.armeps.am/hy/bo/tender_details/tid/1397/apply_status/1// հետևյալ ժամերին՝ 17:30:34, 17:31:04, 17:33:33»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստին մասնակցում էին էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող «Ավռոմիկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Աղասի Մարտիրոսյանը և Միքայել Ավագյանը:

5. <u>ՍՑ-ԷՍ-2019/08 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.01.2019թ. թիվ 26-3/372-19 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՀՀ պաշտպանության նախարարությունը 08.01.2019թ. թիվ ԴՎԱ/5 գրությունը, ««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/24» ծածկագրով

էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 11.12.2018թ. նիստի թիվ 2, 17.12.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունները, «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի Բողոքներ քննող անձին 25.01.2019թ. հայտնած դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար իրային միջոցների և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 1 հավելվածի՝ դիմում-հայտարարության 4-րդ կետով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով նույն դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին, և պարտավորվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հանձնաժողովի 11.12.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետի համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով Ընկերությանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության 4-րդ կետի 4.2 ենթակետով Հանձնաժողովը որոշել է հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/24» ծածկագրով ընթացակարգի

մասնակիցները կկարողանային ահազանգել՝ Աճուրդի ընթացքում առաջացած խնդիրների դեպքում օգնություն ստանալու համար:

«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացրեց Ընկերության տնօրենի էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված՝ 24.12.2018թ. թվագրված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի շտկված տարբերակը:

Ընթացակարգի քննության շրջանակներում Բողոքներ քննող անձը էլեկտրոնային աճուրդի E-auction համակարգը սպասարկող կազմակերպության ներկայացուցիչներին խնդրեց սեղմ ժամկետում տրամադրել եզրակացություն այն մասին, թե ինչով է պայմանավորված եղել ընկերության կողմից շտկված փաստաթղթի ներբեռնելու անհնարինությունը:

E-auction համակարգը սպասարկող կազմակերպությունը Բողոքներ քննող անձին ներկայացրել է հետևյալ եզրակացությունը.

«24.12.2018թ. «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն մուտք է գործել նշված Աճուրդի մանրամասների էջ /https://eauction.armeps.am/hy/bo/tender_details/tid/1397/apply_status/1// հետևյալ ժամերին՝ 17:30:34, 17:31:04, 17:33:33»:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի՝

- 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ առաջին տեղն զբաղեցրած ճանաչված մասնակիցը հրավերով սահմանված՝ որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող

փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ ապրանքների գնման դեպքում՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

- 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև նույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

- 21-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին: Նույն կարգի 20-րդ կետով սահմանված հիմքերի առկայության դեպքում նսույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին:

- 23-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

- 24-րդ կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի՝

- 7.10 կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը.
- 7.12 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:
- 7.16 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն

պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:

- 7.17 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.9-ից 7.16-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;

- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով Ընկերությանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

- Հանձնաժողովն անհամապատասխանություններ է արձանագրել Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում և որոշել է «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին առաջարկել մեկօրյա ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

- «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը Հանձնաժողովի կողմից մերժվել է՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերի շտկված տարբերակները գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չներկայացնելու հիմնավորմամբ:

- 24.12.2018թ. «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն մուտք է գործել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մանրամասների էջ /https://eauction.armeps.am/hy/bo/tender_details/tid/1397/apply_status/1// հետևյալ ժամերին՝ 17:30:34, 17:31:04, 17:33:33:

- էլեկտրոնային աճուրդի Eauction համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպության կողմից չներկայացվեց ընկերության կողմից շտկված փաստաթղթի ներբեռնելու անհնարինությունը բացառող որևէ ապացույց:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից Աճուրդի շրջանակներում ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում առկա անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չշտկելը պայմանավորված է եղել էլեկտրոնային աճուրդի E-auction համակարգի տեխնիկական առանձնահատկություններով, այլ ոչ թե Ընկերության կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունը չկատարելու դիտավորությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.01.2019թ. թիվ 26-3/372-19 գրությամբ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00890518/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ